ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 մայիսի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

69
(2919)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿՈՒՏԱԿԵԼ Է ԱՀՌԵԼԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

Հայաստանի Հանրապետության պետական պարտքը 2023 թվականի հուլիսի վերջի դրությամբ կազմել է մոտ 11 մլրդ 352 մլն դոլար: Ինչպես ցույց են տալիս Ֆինանսների նախարարության տվյալները, այս տարի՝ ապրիլի 30-ի դրությամբ, պետական պարտքը հատեց 12 միլիարդ դոլարի շեմը՝ դառնալով 12 մլրդ 70 մլն դոլար:

Սա ռեկորդային թիվ է, սակայն վատ առումով ռեկորդային. այն ողբալի ցուցանիշ է Հայաստանի Հանրապետության համար:

ՎՋԵԲ տարեկան հանդիպման, գործարար համաժողովի եւ ֆորումի ընթացքում, երբ Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում ելույթ ունեցավ Նիկոլ Փաշինյանը, հայտարարեց, որ Հայաստանը գրանցել է 30% տնտեսական աճ: Ըստ տնտեսագետ Թաթուլ Մանասերյանի՝ այս երեւույթը տնտեսության մեջ անվանում են «փրփուր», եւ «փրփուրների» ավելացմամբ տնտեսական աճով հպարտանալ պետք չէ:

Ստացվում է, որ փրփուրներից կախված Նիկոլ Փաշինյանը, որը նախկիններին մեղադրում էր պետական պարտքի հաշվին հարստանալու մեջ, այսօր եւ մասնատում է Հայաստանը, եւ կուտակել է ահռելի պետական պարտք ու շարունակում է կուտակել՝ միաժամանակ հարստացնելով թիմակիցերին:

Հարկ է նշել, որ ֆինանսների նախարարության ներկայացրած վերջին տվյալների համաձայն՝ 2020 թվականի կեսերից Հայաստանի ՀՆԱ-ն կայուն անկում է գրանցում, եւ, ըստ տնտեսագետների, Հայաստանի տնտեսական աճի դինամիկան պահում են միայն առեւտուրը եւ առեւտրաշրջանառությունը, որի դադարը ճակատագրական կլինի Հայաստանի համար:

Երեւանի ավագանու անդամներին այսուհետ կարգելվի աշխատել որպես հանրային ծառայող: Խորհրդարանը մայիսի 22-ի նիստում ընդունել է «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին օրենքների նախագիծը: Օրենսդրական փոփոխությունը նախատեսում է, որ ավագանու անդամները չեն կարողանա այլեւս համատեղել իրենց պաշտոնը հանրային եւ հանրային ծառայության պաշտոնների հետ: Շեշտենք, որ համապատասխան փոփոխությունները եւ սահմանափակումները կազդեն արդեն նոր ընտրությունների արդյունքում ձեւավորված ավագանու անդամների վրա, բայց ավագանու գործող անդամների վրա չեն տարածվի: «Ժողովուրդ» օրաթերթը դեռ ամիսներ առաջ էր գրել, որ Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության մի շարք անդամներ ավագանու իրենց պաշտոնի հետ անհամատեղելի գործունեությամբ են զբաղվում: ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից իշխանական ավագանու անդամներին մինչեւ փետրվարի 15-ը ժամանակ էին տվել. նրանք կամ ավագանու մանդատից պետք է հրաժարվեին, կամ իրենց զբաղեցրած հանրային պաշտոններից: Փետրվարի 12-ին Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ՝ կառավարությունում տեղի էր ունեցել հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստ, եւ մասնակիցները եկել էին եզրահանգման, որ ավագանու ՔՊ անդամները պետք է «համաներվեն»: Նրանք էին՝ ավագանու իշխանական անդամ Վլադիմիր Կիրակոսյանը, որ համատեղությամբ նաեւ անտառային կոմիտեի նախագահն է, Նատալյա Սինորյանը, որ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի օգնականն էր, իսկ հիմա՝ ՔՊ խմբակցության փորձագետը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախկին ղեկավար, ավագանու անդամ Արման Բարխուդարյանը, որ ԱԺ նախագահի տեղակալ Ռուբեն Ռուբինյանի խորհրդականն է, Ջինա Չալիկյանը, որ ԱԺ նախագահի ռեֆերենտն է, եւ Լեւոն Լեւոնյանը, որ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի օգնականն է նաեւ: Կարճ ասած՝ այն, ինչ հիմա կարելի է ՔՊ-ականներին, արգելվելու է ապագայում բոլորին:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արփի Դավոյանը նախագիծ է ներկայացրել ԱԺ, որով ցանկանում են ընդլայնել Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի լիազորությունները, որպեսզի նա այսուհետ կարողանա քննիչին փոխել գործի վարույթից: ՔՊ շրջանակից, անանուն մնալու պայմանով, երեկ մեզ պատմեցին, որ ՔՊ պատգամավոր Արփի Դավոյանին այդ նախագիծը ներկայացնելու հանձնարարությունը տվել է Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց Գլխավոր դատախազություն, որտեղից ի պատասխան՝ դատախազի խորհրդական Լուսինե Մարտիրոսյանը հայտնեց. «Իրականության հետ աղերս չունեցող եւ մտացածին «լուրերը» Գլխավոր դատախազությունը չի մեկնաբանում»: Բայց փաստ է, որ ԱԺ պետաիրավական հանձնաժողովի, ապա եւ լիագումար նիստերի ընթացքում դատախազի տարեկան հաղորդումների ժամանակ Արփի Դավոյանը շնորհակալությունների տարափ էր հորդեցնում Աննա Վարդապետյանի հասցեին: Եվ այդ «շնորհակալություններից» հետո ԱԺ քննարկմանը ներկայացվեց դատախազին ձեռնտու նախագիծ՝ նույն Դավոյանի կողմից: Պատահականությո՞ւն. դժվար է հավատալ. բայց Արփի Դավոյանը մեր հարցերին չի պատասխանում, որ մանրամասները իրենից էլ ճշտեինք:

Մինչ ՔՊ իշխանության գալը՝ ՀՀ Սահմանադրությունից մեզ հայտնի էր, որ ընտանիքը հասարակության բջիջն է: Այս նորմը վերջին տարիներին հետ է մղվել՝ տեղը զիջելով՝ «ընտանիքը կառավարության բջիջն է» թեզին, քանզի ՔՊ իշխանության գրեթե բոլոր ներկայացուցիչների կանայք, քույրերը, եղբայրները եւ նման այլ անձինք, տեղավորվել են պետական ֆինանսավորմամբ կառույցների տարբեր հաստիքներում: Բացառություն չէր մայիսի 22-ին արտաքին հետախուզության պետի տեղակալ նշանակված Արման Բոշյանը: Տեղեկացնենք, որ տեւական ժամանակ գործազուրկ մնացած նախկին պատգամավոր Արման Բոշյանի կինը՝ Անուշիկ Ավետյանը, իհարկե կառավարության աշխատակից է. նա փոխվարչապետի օգնականն է, տարեկան 7 միլիոն դրամ աշխատավարձ է ստանում: Իհարկե, Բոշյանների համար եւս, անվիճելի, «ապագա կա»:

ԶՐՈՒՅՑ

ԿՄԿՍԵՆ ԻՄՊԻՉՄԵՆՏԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Մայիսի 21-ին Փարաքար համայնքի ավագանու անդամ Էմին Երիցյանը սոցցանցի իր էջում գրել էր.

«Հարգելի՛ բարեկամներ, Փարաքար համայնքի հարգելի բնակիչներ, տեղեկացնում եմ, որ դեռեւս մեկ շաբաթ առաջ վայր եմ դրել համայնքի ավագանու՝ «Դավիթ Մինասյան» խմբակցության ղեկավարի լիազորություններս՝ միաժամանակ դադարեցնելով խմբակցությանն իմ անդամակցությունը:

Ավագանու իմ գործունեությունը շարունակում եմ խմբակցությունից դուրս՝ գործելով անհատական պատասխանատվության տիրույթում, ավելի անկաշկանդ եւ ակտիվ՝ հանուն համայնքի զարգացման: Որակական փոփոխությունների հասնելու ջանքերը հաջողություն չեն արձանագրել, ուստի խմբակցությունից դուրս ավագանու կարգավիճակով տեսնում եմ փոփոխությունների հասնելու հնարավորություններ:

Թե՛ ավագանին, թե՛ համայնքապետարանն էապես պետք է բարելավեն իրենց աշխատանքի որակը, ինչը հնարավոր է միայն ավագանու բոլոր անդամների, աշխատակազմի ներդաշնակ ու ներգրավված աշխատանքով, համայնքի բնակիչների ակտիվ մասնակցությամբ»:

Այս ամենի մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Ապրելու երկիր» կուսակցության համանախագահ Մեսրոպ Առաքելյանի հետ:

-Պարոն Առաքելյան, տեղեկացանք, որ երեկ՝ երեկոյան, Փարաքար համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը հրաժարական է ներկայացրել, եւ Դուք հայտարարություն տարածեցիք, որ նրա դեմ իմպիչմենտի գործընթաց եք ուզում սկսել: Արդյո՞ք դա է հրաժարականի համար պատճառ հանդիսացել, կամ, եթե կան այլ պատճառներ, խնդրում ենք՝ նշել:

-Պատճառների մասին, կարծում եմ, իրենք պետք է մեկնաբանություն տան: Սակայն ավագանու անդամների մեծամասնությունը երեկ չէ առաջին օրը (խմբ.) համայնքի աշխատակազմ է հանձնել իմպիչմենտի գործընթացի փաստաթղթերը, որից մի քանի ժամ հետո եղել է հրաժարականը: Կարծում եմ՝ ակնհայտ է, որ սրա հետեւանքով է: Պարզապես փորձ է արվում հետեւյալի. եթե հրաժարականը հաստատվի, փաստացի ո՛չ թե իմպիչմենտի գործընթաց կլինի, այլ ավագանու ղեկավարի նոր ընտրություններ կլինեն: Այստեղ մի քանի օրվա ժամանակ շահելու հարց է:

-Իսկ Դուք կառաջադրե՞ք թեկնածու:

-Իհարկե՛, իմպիչմենտի գործընթացում առաջադրվել էր խմբակցության ղեկավար Վոլոդյա Գրիգորյանի թեկնածությունը. եթե իրավական այլ կարգադրումներով սահմանված՝ ավագանու նիստ անցկացնելու անհրաժեշտություն կլինի, ապա նիստի ժամանակ նույնպես կառաջադրվի Վոլոդյա Գրիգորյանի թեկնածությունը:

-Իմպիչմենտ ներկայացնելու համար պետք է առաջ քաշել հստակ նախագիծ եւ թեկնածու: Ի՞նչ ծրագիր եք նախատեսել:

-Իմպիչմենտը միասնական որոշում է. այն ենթադրում է՝ իմպիչմենտ եւ նոր ղեկավարի ընտրություն: Ինչպես ասացի՝ ներկայացված է Վոլոդյա Գրիգորյանի ընտրության նախագիծը, եւ նիստը նախատեսված է ուրբաթ օրը:

-Եթե չեմ սխալվում, Դավիթ Մինասյանի ընտրության ժամանակ պայմանավորվածություն էր ձեռք բերվել ավագանու ղեկավարի՝ ռոտացիոն սկզբունքով փոփոխության վերաբերյալ: Երկուսուկես տարի պաշտոնավարումից հետո ղեկավարումը պիտի փոխանցվեր փոխքաղաքապետին՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունից: Այս դեպքում ինչպե՞ս է լինելու:

-Անկեղծ ասած՝ զերծ կմնամ նրանց պայմանավորվածությունը մեկնաբանելուց: Ավելին, քան ասացիք, չգիտեմ: Իմպիչմենտի գործընթացի փաստաթղթի տակ ստորագրել են ավագանու անդամների մեծամասնությունը, ինչը նշանակում է, որ այդ 11 հոգին անհրաժեշտության դեպքում կընտրի Վոլոդյա Գրիգորյանին:

-Այսինքն՝ ունե՞ք ՔՊ-ի աջակցությունը:

-Ո՛չ, մենք ունենք ավագանու 10 անդամ եւ մեկ հոգի՝ ավագանու անկախ անդամ, որը ՔՊ-ից չի եղել:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 212

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԸ ՉԵՆ ՓՈԽՎԵԼ

19.11.2018 թվականին Նիկոլ Փաշինյանը, հանդիպելով Գեղարքունիքի մարզի համայնքապետերի հետ, հայտարարել է. «Ինձ համար, օրինակ, զարմանալի է, թե ինչու է մարդը 15-20 տարի 80 հազար դրամ աշխատավարձով աշխատում:

Նա, ում տեղը չի այդ 80 հազարանոց աշխատավարձը, թող գնա, ավելի պատշաճ աշխատանքով զբաղվի, իսկ ում գործն է՝ կարողանանք այդ 80 հազարը 160 հազար դարձնենք»:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է իրական վիճակը. այս ելույթից 5 տարի անց Հայաստանում նվազագույն աշխատավարձը ավելի քիչ է՝ Նիկոլ Փաշինյանի նշած 80 հազար դրամից, եւ կազմում է 75 հազար դրամ: Թեեւ Նիկոլ Փաշինյանը խոստանում էր 80 հազարը դարձնել 160 հազար դրամ, այնուամենայնիվ, 2024 թվականի պետական բյուջեում նվազագույն աշխատավարձի բարձրացում նախատեսված չէ:

Ահա, թե ինչպես է Նիկոլ Փաշինյանը խաբում:

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ժողովուրդ» օրաթերթը դեռ փետրվար ամսին գրել էր, որ Երեւանի ավագանու իշխող խմբակցության անդամ Նուարդ Վարդանյանը Ford մակնիշի ավտոմեքենայի առքուվաճառքի մեջ է:

Այսպես, Վարդանյանը 2021 թվականի հայտարարագրում նշում է, որ 2022 թվականին ձեռք է բերել 2018 թվականի արտադրության Ford մակնիշի մեքենա, ինչը գուշակության ոլորտից է: Նույն 2021 թվականի հայտարարագրի համաձայն՝ Վարդանյանը Տիգրան Ավինյանի եղբայր Դավիթ Ավինյանից ձեռք է բերել եւս մեկ Ford՝ 2018 թվականի արտադրության, եւ տարվա վերջի դրությամբ հայտարարագրել է 2 Ford մակնիշի մեքենա: 2022 թվականի սկզբում ոչ միայն «անհետանում է» Ford-երից մեկը, այլեւ վաճառքից առաջ փոխվում է մյուս Ford-ի տարեթիվը՝ 2018 թվականի արտադրությունը դառնում է մեկ տարով նոր՝ 2019 թվականի արտադրության:

Ստացվում է, որ Նուարդ Վարդանյանը իրեն պատկանող Ford մակնիշի մեքենան, որը ձեռք է բերել 2018 թվականին 4 մլն դրամով՝ գրեթե 10 հազար ԱՄՆ դոլար, 2022 թվականին վաճառել է 13 հազար ԱՄՆ դոլարով՝ որպես 2019 թվականի արտադրության մեքենա: Ըստ հայտարարագրի՝ Վարդանյանը 3 հազար ԱՄՆ դոլարի օգուտ է ստացել եւ փոխել մեքենայի արտադրման տարեթիվը: «Ժողովուրդ» օրաթերթը կապվել էր ՔՊ խմբակցության ավագանու անդամ Նուարդ Վարդանյանի հետ հասկանալու համար՝ ինչպես է այդպես ստացվել:

«Ընդհանրապես էդ հայտարարագիրը ոտքից գլուխ ամբողջը սխալ է: Ես իրենց (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով) նամակով էլ եմ դիմել, որ ուղղեն: Իրենք չեն ուղղել, եւ դա իմ սխալմունքը չէ: Խնդրում եմ՝ իրենց հետ կապվեք, որովհետեւ մի տունն էլ, որ ունեմ Կենտրոն վարչական շրջանում, երեք անգամ նույն բանը նշված է: Դիմել եմ իրենց, ասացին՝ Ձեզ կոդ կուղարկենք, համակարգի սխալ է եղել, Դուք կուղղեք: Այդ կոդը մինչեւ հիմա չեն ուղարկել: Ես չեմ կարող իրենց փոխարեն պատասխանել»:

Հոդվածի հրապարակումից հետո Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, հրապարակման մեջ շրջանառվող տեղեկության հիման վրա, սկսել է ուսումնասիրություն:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Արման Բոշյանը նշանակվել է արտաքին հետախուզության ծառայության պետի տեղակալ:

«Ղեկավարվելով «Արտաքին հետախուզական գործունեության եւ արտաքին հետախուզության ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով եւ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Արման Բոշյանին նշանակել արտաքին հետախուզության ծառայության պետի տեղակալ»,- ասված է որոշման մեջ:

Հիշեցնենք, որ Արման Բոշյանը եղել է նաեւ «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր:

ՎՐԱՍՏԱՆԸ ԿՋՐԿՎԻ ԵՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՑ

Եթե մինչեւ հոկտեմբեր Վրաստանը չհրաժարվի, այսպես կոչված, «օտարերկրյա գործակալների մասին օրենքից», Եվրահանձնաժողովը կարող է չհաստատել Թբիլիսիի՝ Եվրամիությանը միանալու թեկնածուի կարգավիճակը:

Մայիսի վերջին Եվրամիության արտաքին գործերի նախարարները կքննարկեն դաշինքի պատասխանը Վրաստանում «օտարերկրյա գործակալների մասին օրենքից» հաստատմանը, հայտնում է հրատարակությունը:

Եվրոպացի բարձրաստիճան մի պաշտոնյա նշել է, որ եթե Վրաստանը չեղարկի օրենքը, երկիրը կարող է կորցնել դաշինքին միանալու համար իր թեկնածուի կարգավիճակը:

Մի շարք եվրոպացի պաշտոնյաներ քննադատում են ԵՄ ղեկավարությանը «չափազանց մեղմ» արձագանքելու եւ օրենքի ընդունումից առաջ ավելի կոշտ դիրքորոշում չընդունելու համար:

Անցյալ տարի Եվրահանձնաժողովը առաջարկել էր, որ Եվրամիության խորհուրդը Վրաստանին շնորհի թեկնածուի կարգավիճակ՝ պայմանով, որ իրագործվի ինը քայլ՝ ներառյալ դատական բարեփոխումները, կոռուպցիայի դեմ պայքարը, ապաօլիգարխացումը, մարդու իրավունքների, փոքրամասնությունների, լրատվամիջոցների եւ քաղաքացիական ակտիվիստների իրավունքների պաշտպանությունը եւ այլն:

2023 թվականի դեկտեմբերին Թբիլիսին ստացել է թեկնածուի կարգավիճակը, սակայն, ըստ Եվրամիության ղեկավարության, «օտարերկրյա գործակալների մասին օրենքը» խոչընդոտ է հանդիսանում՝ դաշինք մտնելու համար, քանի որ այն հակասում է ժողովրդավարական արժեքներին եւ սահմանափակում հասարակական կազմակերպությունների աշխատանքը:

Վրաստանի կառավարությունը հայտարարել է, որ օրենքը չի խանգարում երկրի եվրաինտեգրման գործընթացին:

ԱՐՁԱԳԱՆՔ

«ՇՈՒՌՆՈՒԽԻ ՕՐՆ Է ԸՆԿՆԵԼՈՒ», Գ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

«Ես հայտնիության հետ կապված խնդիր չունեմ, ես որ հայտնի եմ եղել, չգիտեմ՝ ինքը որտեղ է եղել»:

Այս մասին լրագրողների հետ զրույցում հայտնեց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանը՝ արձագանքելով ՔՊ-ական Արփի Դավոյանի այն գնահատականին, թե. «Գառնիկ Դանիելյանը, մինչ այս շարժումը, հայտնի չի եղել»:

«Ես 20 տարեկանից Անդրկովկասում ամենամեծ գյուղատնտեսական հիմարկի տնօրենն եմ եղել, ինքը որտե՞ղ է եղել, կարծեմ՝ ինչ-որ կենդանիներ էր պահում, ղուշ էր պահում: Ամեն դեպքում՝ ես էլ եմ կենդանիներ սիրում», - նշել է նա:

ԼՀԿ նախագահ Էդմոն Մարուքյանի հայտարարության մասին, թե Բագրատ Սրբազանը պետք է հստակ երաշխիքներ տա, որ իր շարժման միջոցով չի կարող որեւէ փորձ լինել նախկին ռեժիմների վերադարձի՝ Գառնիկ Դանիելյանն ասել է. «Ինձ թվում է՝ իր մասին է եղել խոսքը, բոլոր ռեժիմների հետ այդ մարդը համագործակցել է, աշխատել է, սիրել է այդ բոլոր ռեժիմների առաջնորդներին՝ մինչեւ մի քանի շաբաթ առաջ: Էդմոն ջան, պետք չէ՝ նման բաներ ասես, Դուք նախկին եք, նախկինի նախկին էլ եք: Մենք ամեն ինչ թողնում ենք մի կողմ, այդ բզբզելն ի՞նչ իմաստ ունի, ջուր եք լցնում Նիկոլի ջրաղացին: Բայց բոլորի հետ համագործակցելն այդքան վատ չէ, ինչքան՝ այս ռեժիմի հետ»:

Պատգամավորը կատակեց՝ 2018-ից առաջ ով պետական ոլորտում աշխատել է, համարվում է «նախկին», հիմա ի՞նչ անենք, 2018-ից հետո ծնվածների հե՞տ գործ ունենանք:

«Շուռնուխի օրն է ընկնելու», - նշել է Գառնիկ Դանիելյանը:

Անդրադառնալով Ալեն Սիմոնյանի հայտարարությանը՝ առ այն, որ 2026 թվականին կայանալիք ընտրություններում ՔՊ-ն ընտրություններում շռնդալից հաղթանակ է տանելու, պատգամավորը մատնանշել է. «Գիտե՞ք ոնց են հաղթելու. Շուռնուխում էլ հաղթանակ տարան: Սահմանապահ զորքերն այդտեղ էին գրանցված ու իրենց ձայն տվեցին: Գյուղը դատարկելով՝ մտածում են, որ հաջորդ ընտրություններին սահմանապահներին ուղղորդելով՝ հաղթանակ կտանեն ու ամբողջ աշխարհին ցույց կտան»:

Հիշեցնենք, որ «Հայաստան» դաշինքի պատգամավոր Գառնիկ Դանիելյանը, Տավուշի Թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը եւ քաղաքագետ Սուրեն Պետրոսյանը առաջնորդում են «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը, որը մայիսի 4-ից քայլարշավով շարժվեց դեպի Երեւան:

Այս պահին շարժման առաջնորդները ակտիվ հանդիպումներ են ունենում տարբեր քաղաքական կուսակցությունների, ՀԿ-ների, տնտեսագետների, իրավաբանների, կրթության ոլորտի մասնագետների հետ՝ նախագծելու առաջիկայում իրականացվելիք գործողությունները:

Պատգամավոր Գառնիկ Դանիելյանը, որ դեռեւս ապրիլից Կիրանցում եւ Ոսկեպարում է եղել, Տավուշից է:

Մայիսի 26-ին շարժումը հանրահավաք է նախատեսել Հանրապետության հրապարակում:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Երեկ աշխատանքային հանդիպում եմ ունեցել Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի (CCAF) համանախագահ Մուրադ Փափազյանի (Franck Papazian) գլխավորած պատվիրակության հետ, որի կազմում էին Ֆրանսիայի խորհրդարանի գործող ու նախկին պատգամավորներ, Ֆրանսիայի հայ համայնքի ակտիվ անդամներ:

Այս մասին գրառում է կատարել նախկին ՄԻՊ Արման Թաթոյանը:

«Հանդիպման սկզբում ընդգծել եմ Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի, Մուրադ Փափազյանի, CDCA-ի, ինչպես նաեւ Ֆրանսիայի հայ համայնքի մյուս կառույցների ու անդամների կարեւոր դերը հատկապես 44-օրյա պատերազմից հետո ու դրանից հետո Հայաստանի ու Արցախի նկատմամբ ադրբեջանական հանցանքները բացահայտելու, աշխարհին ու Ֆրանսիայի իշխանություններին ներկայացնելու հարցում:

Այնուհետեւ, հանդիպման ընթացքում ներկայացրել եմ Հայաստանի Սյունիքի, Գեղարքունիքի եւ Վայոց ձորի, Տավուշի մարզերում փաստահավաք աշխանքների արդյունքները՝ կապված, այսպես կոչված, սահմանազատման, դրա հետեւանքով սահմանային բնակիչների իրավունքների խախտումների ու անվտանգության խաթարման հետ:

Ադրբեջանական թշնամանքի քաղաքականությունը Հայաստանի բնակիչներին պատճառում է տառապանքներ, նրանց զրկել է սեփականութունից ու անվտանգ կյանքի հնարավորությունից, եկամուտ վաստակելու հնարավորությունից:

Քննարկել ենք Ադրբեջանում ապօրինաբար անազատության մեջ պահվող Արցախի գործող ու նախկին ղեկավարների, հայ զինվորականների ազատ արձակման հետ կապված խնդիրներ:

Նախանշել ենք հետագա համատեղ աշխատանքի ուղղությունները Հայաստանում ու Արցախում հայ ժողովրդի նկատմամբ ադրբեջանական հանցանքներն աշխարհին ներկայացնելու, նրանց կեղծիքների տարածումը թույլ չտալու հարցերում», - հայտնում է Թաթոյանը:

ՄԻՆԱՍՅԱՆԻ ՀԱՐՑԸ՝ ՔՊ–ԱԿԱՆՆԵՐԻՆ

«Հայաստանի տարածքը որքա՞ն է: Այդ հարցը ձեզ ենք տալիս, իշխանությունները դուք եք: Այստեղից, երբ հայտարարում եք՝ 29 հազար 743 քկմ, հարցը տալիս ենք շատ պարզ՝ հիմա այդքա՞ն է: Հիմա այդքա՞ն է Հայաստանի Հանրապետությունը»,- Ազգային ժողովում նիստի ժամանակ ասաց «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արծվիկ Մինասյանը:

Նա շարունակելով խոսքը՝ նշեց. «Այսինքն՝ Ադրբեջանը զավթած տարածքներ չունի՞ Հայաստանից:

Հայաստանի տարածքը որքա՞ն է այս պահի դրությամբ, որքանի՞ նկատմամբ Հայաստանն ունի իշխանություն»:

ՔՊ-ական պատգամավորները տեղից բղավեցին, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը լռություն պահանջեց:

Այնուհետեւ, դիմելով Արծվիկ Մինասյանին՝ ասաց. «Կարծում եմ՝ հայրենի իմացության առումով որեւէ մեկիս չեք զիջում: Հայաստանի տարածքը, բազմիցս ասել ենք, 29 հազար 743 քկմ է: Հարց եք բարձրացնում՝ հիմա այդքա՞ն է: Այո՛, միշտ այդքան է՝ անկախությունից ի վեր: Այն մասերը, որոնք այս պահին զավթվել են, ու ես դրա հետ համաձայն եմ, նույնպես ՀՀ տարածք են:

Հիմա հարց է հնչել՝ Դուք, ձեր ուժն արդյո՞ք ընդունում է, որ Հայաստանի ինքնիշխան տարածքը 29 հազար 743 քկմ է: Այո՛, կամ ո՛չ»:

Արծվիկ Մինասյանն արձագանքեց. «Քննչական գործողությա՞ն եմ մասնակցում: Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքը հայտարարված, օրենքներով ամրագրված 29 հազար 743 քկմ է, դա ամրագրված է, իմ հարցը շատ պարզ է, ընդունել-չընդունելի հարց չէ:

Ձեզ եմ հարցնում՝ հիմա ինչքա՞ն է: Ինչքա՞ն եք թողել»:

Ալեն Սիմոնյանը պատասխանեց. «Այդքան»:

ՎՃԻՌ

«ՈՉՆՉԱՑՆԵ՛Լ «ՀԱՆՑԱՆՔԻ ԳՈՐԾԻՔ» ՀՈՎԱՆՈՑԸ»

Վայոց ձորի մարզում վարչապետ Նիկոլ Փաշինյանի վրա հովանոց նետած կնոջ գործով դատարանը վճիռ է կայացրել. ոչնչացնել ապացույցը՝ հովանոցը:



2023 թվականի ապրիլի 10-ին Նիկոլ Փաշինյանը Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք այց էր կատարել: Մալիշկա բնակավայրում ժամը 13:15-ի սահմաններում նոր կառուցված 8-րդ, 14-րդ եւ Կենտրոնական փողոցների խաչմերուկին նրան էր մոտեցել 48-ամյա մի կին: Վերջինս 48-ամյա Նարինե Ասատրյանն էր, որը Քաշաթաղի շրջանից տեղահանվածներից է. նա թշնամուն հանձնված Քարեգահի գյուղի բնակիչներից է, բազմազավակ մայր:

Արդյունքում՝ Նարինեն Նիկոլ Փաշինյանի ուղղությամբ հովանոց էր նետել՝ այդպիսով իր բողոքն արտահայտելու Նիկոլ Փաշինյանի վարած քաղաքականության դեմ:

«Իհարկե, այն ամենի համար, ինչ արել եմ՝ չեմ փոշմանել, ես ամեն ինչի պատրաստ եմ: Ինքս հանգիստ ու համբերատար բնավորություն ունեմ, բայց եթե հարցը վերաբերում է իմ հայրենիքին, ինձնից չար մարդ չի լինում. այո՛, ինչ ասել եմ՝ իմ խոսքի տերն եմ»,- նշել էր Նարինե Ասատրյանը:

Նա վստահ է, որ եթե բոլորն իրենց դժգոհությունն արտահայտեին այն քաղաքականության դեմ, որը վարում էր օրվա իշխանությունը, ապա Արցախն այսօր ամբողջովին Ադրբեջանի կողմից չէր օկուպացվի:

«Ես, մեր Բերձորից սկսած, մինչեւ հիմա պայքարում եմ: Երբ Բերձորը պիտի հանձնեին թշնամուն, Վիտալի Բալասանյանը եկել էր այնտեղ, նույն բախտին էլ ինքն է արժանացել՝ ուղղակի ռուսները խանգարեցին: Ես մտածելու որեւէ բան չունեմ, իրենք թող մտածեն»,- նշել էր մեր զրուցակիցը:

Կատարվածից հետո գործի անցան իրավապահները: ՀՀ քննչական կոմիտեն Վայոց ձորում տեղի ունեցած միջադեպից հետո Նարինե Ասատրյանին մեղադրանք էր առաջադրել՝ Քրեական օրենսգրքի 44-452-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով, որը նախատեսում է ազատազրկում 2-5 տարի: Նախաքննության ավարտից հետո քրեական գործն ուղարկվել է Արարատի եւ Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Նարինե Ասատրյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել երկրից չբացակայելը:

Արդյունքում, շուրջ մեկ տարի տեւած քննությունից հետո՝ այս տարվա ապրիլի 16-ին, դատավոր Միքայել Գրիգորյանը կայացրել է որոշում:

Նարինե Նորիկի Ասատրյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 44-452-րդ հոդվածի 3-րդ նախատեսված հանցանքի կատարման մեջ, եւ նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում՝ 2 տարի ժամկետով:

ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի կիրառմամբ՝ Նարինե Ասատրյանի նկատմամբ ազատազրկման ձեւով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան 2 տարի ժամկետով՝ վարքի նկատմամբ վերահսկողությունը դնել ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության վրա:

Նարինե Ասատրյանին, պարտավորեցնելով՝ առանց դատապարտյալի, վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի որոշման համաձայն՝ թույլ չտալ լքել Հայաստանի Հանրապետության տարածքը, բնակության վայրը փոխելու դեպքում՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին սեղմ ժամկետում հայտնել իր նոր բնակության վայրի հասցեն:

Նարինե Ասատրյանի նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ բացակայելու արգելքը, թողնել անփոփոխ՝ մինչեւ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ Նարինե Ասատրյանի՝ ՀՀ պետական սահմանի հատման արգելափակումը վերացնել:

Դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ քրեական գործով իրեղեն ապացույց ճանաչված՝ Նարինե Նորիկի Ասատրյանի անձնական խուզարկությամբ վերցված բալագույն հովանոցը ոչնչացնել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՔՍԱՆԵՆԳՈՒԹՅՈՒՆ

ԱՊՕՐԻՆԻ ԴԵՂՈՐԱՅՔ Է ՏԵՂԱՓՈԽՎԵԼ

ՊԵԿ-ը կանխել է մաքսանենգ ճանապարհով դեղորայքի ներմուծման դեպքեր:

Պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչությունը, շարունակելով անզիջում պայքարը Հայաստանի Հանրապետության սահմանով դեղորայքի անօրինական տեղափոխման ուղղությամբ, բացահայտել է դեղամիջոցների մաքսանենգության 2 դեպք:

Օրերս ՊԵԿ ՄԴՊ վարչության օպերատիվ հետախուզության բաժին տվյալներ էին ստացվել այն մասին, որ Գ. Կ.-ն, հանդիսանալով «Հարավկովկասյան Երկաթուղի» ՓԲ ընկերության Երեւան-Թբիլիսի-Երեւան գնացքներից մեկի պետ, Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիից Երեւան ուղեւորվող գնացքի երթուղով, պարբերաբար, Հայաստանի Հանրապետություն է տեղափոխում մաքսային հսկողությունից թաքցված դեղորայք:

Օպերատիվ տվյալներն իրացնելիս ՊԵԿ աշխատակիցները Երեւանի Սասունցի Դավիթ կայարանի մուտքի մոտ՝ ավտոկայանատեղիում, մոտեցել են քաղաքացի Գ. Կ.-ին, որն այդ պահին փորձել է իր մեքենայի բեռնախցիկում տեղավորել «Հարավկովկասյան Երկաթուղի» ընկերությանը պատկանող գնացքով, իր իսկ կողմից ներմուծած՝ շուրջ 25 կիլոգրամ քաշով, երկու մեծ սեւ պոլիէթիլենային տոպրակ: Գ. Կ-ն հրավիրվել է ՊԵԿ ՄԴՊ վարչություն, որտեղ ներկայացրել է իր ձեռքի պոլիէթիլենային տոպրակներում առկա ապրանքները:

Ուսումնասիրությունից հետո պարզվել է, որ ամբողջը դեղորայք է եղել:

Դեպքի առնչությամբ կազմվել է մաքսային կանոնների խախտման արձանագրություն, որը տրամադրվել է ՊԵԿ իրավաբանական վարչություն:

Մեկ այլ դեպքով, ՊԵԿ ՄԴՊ վարչության աշխատակիցները տեղեկություններ էին ստացել, որ քաղաքացի Դ. Ս.-ն, իր կողմից շահագործվող տրանսպորտային միջոցով, մաքսային հսկողությունից թաքցնելով, Վրաստանից Հայաստան է տեղափոխում դեղորայք:

Հիշյալ օպերատիվ տվյալներն իրացնելիս ՄԴՊ վարչության աշխատակիցները, Դ. Ս.-ի կողմից շահագործվող տրանսպորտային միջոցը Վրաստանից ժամանելուց հետո՝ ուղեկցել են «Ուրբան Լոջիստիք Սերվիսիս» փակ բաժնետիրական ընկերության մաքսային հսկողության գոտի: Մաքսային զննման արդյունքում՝ տվյալ տրանսպորտային միջոցի դռների եւ բեռնախցիկում առկա գազաբալոնային համակարգի միջից հայտնաբերվել են մաքսային հսկողությունից թաքցված, ընդհանուր 24 կիլոգրամ քաշով տարբեր տեսակի դեղամիջոցներ:

Կազմվել է մաքսային կանոնների խախտման արձանագրություն, որը տրամադրվել է Հայաստանի Հանրապետության ՊԵԿ իրավաբանական վարչություն:

ԲՌՆԱԳԱՆՁԵԼՈՒ ՊԱՀԱՆՋ

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔ՝ ԱՄՆ-ՈՒՄ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Գլխավոր դատախազությունը պահանջում է ՀՀ պաշտպանության նախկին նախարարից բռնագանձել ԱՄՆ-ում գտնվող բնակելի տարածքը, Երեւանի կենտրոնում գտնվող անշարժ գույքը եւ դրամական միջոցներ:

Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի մայիսի 15-ին վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը:

Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ ՀՀ պաշտպանության նախկին նախարար Վիգեն Սարգսյանից եւ նրան փոխկապակցված անձից բռնագանձել՝

- 1 անշարժ գույք Երեւանի կենտրոնում, իսկ անհնարինության դեպքում՝ գույքի միջին շուկայական արժեքը՝ 181 մլն 125 հազար դրամ.
- ԱՄՆ Մասաչուսեթս նահանգում գտնվող բնակելի տարածքը, իսկ անհնարինության դեպքում՝ գույքի ձեռքբերման արժեքը՝ 2 մլն 50 հազար ԱՄՆ դոլարին համարժեք 940 մլն 909 հազար դրամ.
- 255 մլն 454 հազար դրամ՝ որպես ապօրինի դրամական միջոցների մնացորդ.
- 172 մլն 486 հազար դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում եւ հնարավոր չէ բռնագանձել, քանի որ 2004-2022 թվականների ընթացքում փոխանցվել է բարեխիղճ ձեռքբերողի եւ/կամ հնարավոր չէ նույնականացնել՝ բռնագանձումը տարածելով նաեւ համատեղ կյանքի ընթացքում Լ.Գ.-ի անվամբ առեւտրային բանկերում առկա դրամական միջոցների, գույքերի վրա:

- *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 21-ից 22-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 89 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

Ա. ԽԱՆՋՅԱՆԻ ԱՄԱՌԱՆՈՑԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ

Դիլիջանի համայնքապետ Դավիթ Սարգսյանին է դիմել «Գրին ռոք մեեջմենթ գրուպ» ՍՊԸ-ն՝ի դեմս տնօրեն Վարազդատ Ներսիսյանի, եւ հայտնել է, որ այդ ընկերության սեփականությունը հանդիսացող, Դիլիջան քաղաքի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 3/1 հասցեի 2800 քմ մակերեսով հողամասում է գտնվում 1936թ.-ին կառուցված՝ Աղասի Խանջյանի ամառանոցի շենքը, որը ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 30-ի N 1929-Ն որոշման համաձայն՝ ընդգրկված է Տավուշի մարզի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում՝ որպես հանրապետական նշանակության հուշարձան: Այդ շենքը ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից հաշվառված է որպես ինքնակամ շինություն, վթարային է եւ գտնվում է կիսավեր վիճակում: «Գրին ռոք մենեջմենթ գրուպ» ընկերությունը, կարեւորելով հուշարձանների պահպանման եւ վերականգնման անհրաժեշտությունը, պատրաստակամություն է հայտնել ընկերության սեփականությունը հանդիսացող 2800քմ հողամասը, այնտեղ առկա հուշարձան հանդիսացող շենքի պահպանման եւ սպասարկման նպատակով, որպես սեփականություն անհատույց փոխանցել (նվիրել) Դիլիջան համայնքին: Համայնքի ավագանին 2023թ. նոյեմբերի 2-ի նիստում քվեարկությամբ հավանություն է տվել նշված՝ 2800 քմ հողամասը ընդունելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը: Այժմ «Գրին ռոք մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ն նորից դիմել է Դիլիջանի համայնքի ղեկավարին՝ Դիլիջանի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 3/1 հասցեի 2800 քմ հողամասում գտնվող, հանրապետական նշանակության հուշարձան հանդիսացող 966.83 քմ ընդհանուր մակերեսով Աղասի Խանջյանի ամառանոցի շենքը (շինության ավարտվածության աստիճանը 50-80%) հիմանորոգման եւ որպես թանգարան վերակառուցելու նպատակով՝ անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ իրենց տրամադրելու խնդրանքով: Համայնքի ավագանին 2024թ. մայիսի 10-ի՝ թիվ 695-Ա որոշմամբ համաձայնություն է տվել վերոհիշյալ 2800 քմ հողամասում գտնվող, հանրապետական նշանակության հուշարձան հանդիսացող 966.83 քմ ընդհանուր մակերեսով՝ Աղասի Խանջյանի ամառանոցի շենքը հիմանորոգման եւ որպես թանգարան վերակառուցելու նպատակով, անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ «Գրին ռոք մենեջմենթ գրուպ» ՍՊԸ-ին տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը: «Գրին ռոք մեեջմենթ գրուպ» ՍՊԸ-ի ինտերնետային կայքում որպես այդ ընկերության հիմնադիր՝ նշված է Դիլիջանում ծնված, Շվեյցարիայում ապրող Մարետա Գեւորկյանը, որը որպես միանձնյա ձեռնարկատեր, տիրապետում է Հայաստանում գործող Evocabank-ի բաժնետոմսերի 100%-ին: Կես տարում ինչ փոխվեց, ինչո՞ւ անցած տարվա նոյեմբերին նշված 2800 քմ հողամասը եւ դրանում 966.83 քմ մակերեսով Աղասի Խանջյանի ամառանոցի շենքը համայնքին նվիրաբերած «Գրին ռոք մեեջմենթ գրուպ» ՍՊԸ-ն փոշմանեց եւ Խանջյանի ամառանոցի շենքը համայնքից հետ վերցրեց՝ որպես թանգարան վերակառուցելու նպատակով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԾՆՆԴՅԱՆ ՕՐ

ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ

Շուշիի ազատագրման, «Հարսանիք լեռներում» ռազմական գործողության նախապատրաստման աշխատանքներում մեծ դերակատարում ունեցող ռազմական գործիչ Արկադի Տեր-Թադեւոսյանը մայիսի 22-ին կդառնար 85 տարեկան:

Հայաստանի զինված ուժերի գեներալ-մայոր, Արցախյան ազատամարտի մասնակից, ՀՀ պաշտպանության նախկին փոխնախարար, Հայաստանի ազգային հերոս, Արցախի հերոս Արկադի Տեր-Թադեւոսյանը ծնվել է Հայոց Ցեղասպանությունից հետո Անիի մայր տաճարի դիմաց՝ Արաքսի հայաստանյան ափին գտնվող Խարկով փոքրիկ գյուղում հաստատված, ապա աքսորից խուսափելու համար Թիֆլիսում հաստատված Տեր հոր ընտանիքում:

Ավարտելով Բաքվի զինվորական ուսումնարանն ու Լենինգրադի տրանսպորտի եւ թիկունքի ռազմական ակադեմիան՝ Կոմանդոսը նախ ծառայության է անցնում Գյումրիում, հետո՝ Երեւանում՝ միաժամանակ դասախոսելով գյուղատնտեսական ինստիտուտում՝ որպես ռազմական ամբիոնի դասընթացակարգի պետ:

Կոմանդոս անունով հայտնի զինվորականն իր ծառայությունը ԽՍՀՄ բանակում անցել է Աֆղանստանում, Գերմանիայում, Չեխոսլովակիայում եւ Բելառուսում: Արցախյան շարժման տարիներին ակտիվ մասնակցություն է ունեցել կամավորականների մարզման գործում:

1990 թվականին դարձել է «Սասունցի Դավիթ» կամավորական ջոկատի անդամ եւ մեկ տարի անց նշանակվել Հայաստանի պաշտպանության կոմիտեի արտազինվորական պատրաստության բաժնի պետ:

1991 թվականի հոկտեմբերի 30-ին Արցախի նորաստեղծ ինքնապաշտպանական ուժերը Կոմանդոսի հրամանատարությամբ իրականացված ռազմական գործողության շնորհիվ ազատագրում են ռազմավարական մեծ կարեւորություն ունեցող Հադրութի շրջանի Տող գյուղը:

1992 թվականի մայիսին Արկադի Տեր-Թադեւոսյանը ակտիվ մասնակցություն է ունեցել Շուշիի ազատագրման՝ «Հարսանիք լեռներում» ռազմական գործողության նախապատրաստման աշխատանքներին:

Կոմանդոս անունով Արկադի Տեր-Թադեւոսյանին կոչել են զինակից ընկերները Արցախում՝ որպես առաջնորդ, ում խոսքով շարժվել են գործողութունների ժամանակ: Տեր-Թադեւոսյանին կոչել են նաեւ «Լեռնային աղվես»: Այս անունը կապված է գործողության հետ, որն իրականացրել են Արցախի լեռնային անտառներում գյուղերը պաշտպանելիս: Պատմում են, որ Կոմանդոսը, լեռնային տարածքներում շատ արագ կողմնորոշվելու շնորհիվ, կարողացել է տարբեր կողմերից հարվածներ հասցնել թշնամուն, ու վերջիններիս թվացել է, թե սարերում հայկական բազաթիվ ջոկատներ են գործում:

Իր կյանքի ընթացքում ունեցած ռազմական գործողությունների համար պարգեւատրվել է առաջին աստիճանի «Մարտական խաչ» շքանշանով: Հայաստանի զինված ուժերի ստեղծման եւ կայացման, հայրենիքի պաշտպանության եւ անվտանգության ապահովման գործում մատուցած բացառիկ ծառայությունների համար 2021 թվականի մայիսի 8-ին հետմահու պարգեւատրվել է «Հայրենիքի» շքանշանով:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՕՖ-Ի ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

ՆՈՐ ՇՈՒՆՉ՝ ՎԱՆԱՁԱՐԻ ԴՊՐՈՑԻՆ

Վերաբացման պաշտոնական արարողությանը մասնակցել են գեղարվեստի դպրոցի բարերար Գուրգեն Եկարեանը, Գուգարաց թեմի առաջնորդը, Լոռու մարզպետը, Վանաձորի համայնքապետի պաշտոնակատարը, ինչպես նաեւ բարձրաստիճան հյուրեր ու ներկայացուցիչներ Հայաստանից ու ԱՄՆ-ից:

«Աստված օրհնել է այս կառույցը, օրհնել է մեր երիտասարդներին ու փոքրիկներին, որպեսզի գալով այստեղ՝ կրթություն ստանան, հոգեմտավոր զարգացում ունենան եւ վաղվա Հայաստանի ապագայի համար իրենց ծիլերը տան: Շնորհակալ ենք Հայ օգնության ֆոնդի ողջ անձնակազմին՝ իրենց ներդրումը Հայաստան աշխարհում եւ ի մասնավորի՝ Վանաձոր քաղաքում ունենալու համար: Այլեւս ընդունայն է այս կառույցը, ձեր ջանքն ու եռանդը», - ողջույնի ու օրհնանքի խոսքում նշել է Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Հովնան եպիսկոպոս Հակոբյանը:

«Ավելի լավ ու ավելի գեղեցիկ նվեր Վանաձոր համայնքին ու տեղի արվեստասեր երեխաներին հնարավոր չէր անել, որն իրականացվեց ընդամենը մեկ տարում: Սա Հայ օգնության ֆոնդի հերթական, բայց շատ կարեւոր ծրագիրն է, որն իր տրամաբանական ավարտին է մոտենում: Մենք շատ հպարտ ենք, որ հիսունականներին կառուցված ու երբեւէ չվերանորոգված, մեկհարկանի ու վատթար վիճակում գտնվող շենքն այլեւս պատմություն է: Այժմ մենք ունենք վերակառուցված երկհարկանի դպրոց՝ ամբողջովին կահավորված ու հագեցած անհրաժեշտ պարագաներով, որը հնարավորություն կտա այստեղ ուսանող երեխաներին՝ արդեն կրկնակի շատ, ավելի քան 200 աշակերտներին, իրենց տաղանդը բացահայտելու գեղարվեստի ոլորտում: Շնորհակալ ենք բոլորին եւ հատկապես՝ բարերար պարոն Գուրգեն Եկարեանին, որը մեծ սիրով համաձայնեց ստանձնել գեղարվեստի դպրոցը վերակառուցելու պատասխանատվությունն ու իր աջակցությունը տրամադրեց», - ասել է ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բագրատ Սարգսյանը:

Լոռու մարզպետ Արամ Ղազարյանը նույնպես շնորհավորել է վանաձորցիներին հերթական նշանակալի իրադարձությունը տոնելու համար՝ շեշտելով, որ դպրոցի վերակառուցումը ավելին է, քան բարեգործությունը: «Դուք նոր շունչ եք հաղորդել կրթամշակութային մի օջախի, որն ունի ավելի քան 65 տարվա փառավոր պատմություն: Նկարիչների եւ քանդակագործների այս պահանգը, որն այսօր ունենք, պարտական ենք հենց այս դպրոցին ու նրա նվիրյալներին: Մաղթում եմ, որ այստեղ ուսանող աշակերտները լինեն հայրենասեր ու ծառայեցնեն իրենց գործունեությունը՝ ի բարօրություն Հայաստանի Հանրապետության»:

Պաշտոնական արարողությունից հետո պատվավոր հյուրերը ծառ են տնկել դպրոցի այգում, այնուհետ շրջել են դպրոցի սենյակներով, ծանոթացել իրականացված աշխատանքներին:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 6 պատահար. 1 մարդ զոհվել է, 10-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀՈՒՇԱԳԻՐ

Հուշագիր են ստորագրել Կովկասում Visa-ի տարածաշրջանային մենեջեր Դիանա Կիգուրաձեն եւ Կովկասում ՎՋԵԲ-ի տարածաշրջանային տնօրեն Ալկիս Վրյենիոս Դրակինոսը:

Գործընկերության նպատակն է խթանել կայուն եւ ներառական տնտեսական աճը Հայաստանում եւ ՎՋԵԲ-ի տարածաշրջանի այլ երկրներում՝ աջակցելով թվայնացմանը եւ ֆինանսական ներառմանը:

Այս համագործակցության շրջանակում գործընկերները կնպաստեն ֆինանսական գրագիտության խթանմանը, ՓՄՁ-ներին եւ կին ձեռներեցներին աջակցելու, ինչպես նաեւ էլեկտրոնային վճարումների միջոցով տնտեսական մասնակցության դյուրացման ծրագրերի իրականացմանը: Սա կներառի նաեւ ծառայությունների թվայնացումը, ինչպիսիք են GovTech-ը եւ հանրային տրանսպորտը:

«Հայաստանում ու տարածաշրջանում Visa-ի եւ ՎՋԵԲ-ի գործունեության մեծ փորձի շնորհիվ այս գործընկերության միջոցով դրական փոփոխություններ կբերենք Հայաստանի տնտեսությանը եւ հասարակությանը: Մենք հպարտ ենք միավորվել նման խոշոր դերակատարի հետ՝ այս դինամիկ երկրում եւ արագ զարգացող շուկայում խթանելու թվայնացումը, ՓՄՁ-ներին եւ ձեռներեց կանանց», - ասել է Կովկասում Visa-ի տարածաշրջանային մենեջեր Դիանա Կիգուրաձեն:

«Ուրախ ենք համագործակցել Visa-ի հետ՝ Հայաստանում զարգացնելու կարեւոր առաջնահերթությունները, ինչպիսիք են թվայնացումը, ֆինանսական ներգրավումը եւ կայուն տնտեսական աճը: Կին ձեռներեցները զգալի ներդրում ունեն Հայաստանի տնտեսական աճում, եւ դեռ շատ չօգտագործված ներուժ կա: Մենք վստահ ենք՝ միասին կարող ենք կրկնապատկել դրական փոփոխությունները, նորարարության խթանումը եւ ՎՋԵԲ-ի տարածաշրջաններում ներառական աճի եւ բարգավաճման հնարավորությունների ստեղծումը»,- նշել է Կովկասում ՎՋԵԲ-ի տարածաշրջանային տնօրեն Ալկիս Վրյենիոս Դրակինոսը:

ՀԲԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ի փոփոխություն «Բիէսթի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «Ժողովուրդ» օրաթերթի՝07.09.2023թ. թիվ 125 (2791) համարի 6-րդ էջում տպագրված «Հրապարակային ծանուցման», տեղեկացնում ենք, որ «Արմավիրի մարզ, համայնք Մրգաշատ, 10 փողոց, 23» հասցեն պետք է ընթերցել՝ «Արմավիրի մարզ, համայնք Մրգաշատ, 14 փողոց, 27»: Աճուրդային փուլերը շարունակվելու են 27.05.2024թ.-ից՝ վերոնշյալ «Հրապարակային ծանուցման» մեջ նշված պայմաններով:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇ

«ԼՈՒՅՍ» հիմնադրամը վերլուծել է 2024թ. առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվությունը:

Այսպես՝ Ռուս-ուկրաինական ռազմական հակամարտության սկզբից ՀՀ տնտեսությունում արձանագրված բարձր տնտեսական ակտիվությունը պահպանվել է նաեւ 2024թ. առաջին եռամսյակում. տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 14.3%: Նշված բարձր ցուցանիշն առավելապես պայմանավորված է ժամանակավոր եւ ոչ կայուն երեւույթներով, մասնավորապես՝ ոսկերչական գործունեության ծավալների կտրուկ աճով: Եվ պատկերը, կախված արտաքին, դժվար կանխատեսելի իրավիճակից, կարող է կտրուկ փոխվել (ոսկերչական գործունեության ծավալները կտրուկ նվազել)՝ էական բացասական ազդեցություն թողնելով մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ ոսկերչական արտադրատեսակների արտադրությունը (հիմնականում՝ վերամշակումը) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 11.9 անգամ: Մինչդեռ, արդյունաբերության՝ ՀՀ տնտեսության համար էական կարեւորություն ունեցող մի շարք ենթաճյուղերում անկումը շարունակվում է: Այսինքն՝ արդյունաբերության, որոշակի իմաստով, «համակարգաստեղծ» ենթաճյուղերի արտադրության նվազման ֆոնին ոսկերչական արտադրատեսակների արտադրությունն էական աճ է գրանցում: Արդյունքում շարունակում է վատթարանալ արդյունաբերության կառուցվածքը:

2024 թ. առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 525.0 մլրդ դրամ: Ի դեպ, 2024 թ. պետական բյուջեի եկամուտների ծրագրված եւ փաստացի ցուցանիշների հաշվարկում կատարվել է մեթոդաբանության փոփոխություն, համաձայն որի՝ դրանցում ներառվում է նաեւ հիպոթեքային վարկերի վճարված տոկոսների վերադարձի գումարը (որը նախկինում նվազեցվում էր հարկային եկամուտներից): Այս պարագայում եւս պետական բյուջեի եկամուտները ճշտված պլանի նկատմամբ թերակատարվել են 6.8%-ով: Հատկանշական է, որ թերակատարումն առկա է նաեւ հաստատված բյուջեի նկատմամբ: Թերակատարումից բացի, արձանագրվել է նաեւ բյուջեի եկամուտների աճի տեմպի դանդաղում՝ հիմնականում պայմանավորված բարձր տնտեսական աճի պայմաններում ոչ հարկունակ ճյուղերի աճով:

ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերը 2024թ. առաջին եռամսյակում կազմել են 525.9 մլրդ դրամ: Դրանք նույնպես ճշտված պլանի համեմատ թերակատարվել են՝ 17.5%-ով: Ընդ որում, թերակատարումը վերաբերում է թե՛ ընթացիկ եւ թե՛ կապիտալ ծախսերին: Ի դեպ, բյուջեի ընդհանուր, ինչպես նաեւ ընթացիկ ծախսերի դեպքում հաստատված բյուջեի նկատմամբ եւս արձանագրվել է թերակատարում:

Թերակատարվել են հաշվետվությունում նշված բոլոր պատասխանատու մարմինների գծով իրականացվող ծրագրերի շրջանակում կատարված ծախսերը: Ամենացածր կատարողականն արձանագրվել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության եւ ՀՀ էկոնոմիկայի նախարարության պատասխանատվության տակ գտնվող ծրագրերի գծով:

2024 թ. առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեն ունեցել է 0.9 մլրդ դրամ պակասուրդ՝ ճշտված պլանով ծրագրված 74.4 մլրդ դրամ եւ հաստատված պլանով նախատեսված 34.9 մլրդ դրամ պակասուրդի փոխարեն:

Հաշվետու ժամանակաշրջանում կրկին կառավարությունն «աչքի է ընկել» բյուջետային պլանավորման ասպարեզում ունեցած անհաղթահարելի խնդիրներով: Մասնավորապես՝ 2024թ. պետական բյուջեով նախատեսված գրեթե բոլոր ցուցանիշները ճշտված պլանով վերանայվել են, սակայն փաստացի մեծություններից շատերը ոչ միայն զգալիորեն հեռու են եղել ճշտված պլանից, այլեւ ավելին, շատ դեպքերում դրանք ճշտված պլանից ավելի շատ են շեղվել, քան հաստատված պլանից:

Պետական բյուջեի հարկային եկամուտների եւ պետական տուրքերի՝ պլանի նկատմամբ թերակատարումը, ինչպես նաեւ տպավորիչ տնտեսական ակտիվության պարագայում գրեթե եռակի ցածր աճի տեմպը մտահոգությունների տեղիք են տալիս ՀՀ տնտեսությունում տեղի ունեցող բացասական զարգացումների շուրջ: Պատկան մարմինների կառավարման ցածր մակարդակի պատճառով ծախսերի թերակատարման շուրջ ձեւավորված, տարիներ ի վեր առկա եւ արդեն «քրոնիկ» դարձած հիմնախնդիրը փաստում է, որ գործող իշխանությանն այդպես էլ չի հաջողվում լուծել պետական կառավարման համակարգում տնտեսության համար առանցքային ծրագրերի արդյունավետ իրականացման կարողությունների ապահովման խնդիրը: Արդյունքում, բյուջեի ծախսերի թերակատարման հետեւանքով՝ տնտեսության ներուժի տեսանկյունից կարեւորագույն ծրագրերը իրականացվում են թերի (ոչ լրիվ կամ ժամանակին)՝ վտանգելով ինչպես ընթացիկ, այնպես էլ երկարաժամկետ տնտեսական աճն ու զարգացումը:

ՄՆՆԱ ՍՐԿՊԻՈՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՎԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԸ ՊԵՏՔ Է ԹԵԹԵՎԱՆԱ

«Հայաստանում արդեն վիճակն այնպես է, որ ունենք գերկենտրոնացում», - այս մասին երեկ՝ մայիսի 22-ին, Բագրատ Սրբազանի հետ հանդիպմանը հայտարարեց տնտեսագետ Միքայել Մելքումյանը:

«Մենք ունենք մոտ 100 հազար տնտեսվարող սուբյեկտ, որոնք հարկայինին հաշվետվություն են ներկայացնում: Դրանից շուրջ 60 հազարը, այսպես կոչված, փոքրմիջինն է, 25 հազարը՝ միջին բիզնեսներն են, մոտ 14 հազարն էլ խոշորներն են, որոնք միլիարդավոր դրամների շրջանառություն ունեն: Բիզնեսմենը հաստատ մտքով շարժման հետ է: Մոտ 740 հազար վարձու աշխատող կա, եւ մոտ 300 հազար գյուղում աշխատողներ կան: Նրանք մեր ուժն են: Մինչեւ 400 հազար մարդ ստանում է 150 հազար դրամ. դա խայտառակություն է: Ստանում են օրական 5 հազար դրամ այն դեպքում, երբ բանվորը շինարարությունում 10 հազար դրամից պակաս չի աշխատում: Գիտեք, որ մի մասն էլ ճամպրուկը վերցնում ու արտագաղթում է այս երկրից: 5,2 տրիլիոն դրամ վարկային պորտֆելն է, երբ ունենք 8,2 տրիլիոն համախառն ներքին արդյունք: 8 տրիլիոնի մեջ 5 տրիլիոնը մեր վարկերն են, 5,5-ն էլ մեր ավանդներն են, բայց այդ ավանդների ընդամենը 2 տոկոսը կազմում է մոտ 4 տրիլիոնը: Արձանագրենք, որ Հայաստանում արդեն վիճակն այնպիսին է, որ ունենք գերկենտրոնացում»,- նշեց նա:

Մելքումյանն ասաց, որ Հայաստանում այժմ 2,5 միլիոն վարկառու կա. - «Այդ վարկառուներից մոտավոր 2 միլիոնն ունեն մինչեւ 700 հազար վարկ, դրանք սպառողական վարկերն են. մարդն անընդհատ սպառողական վարկ է վերցնում, որ ապրի»:

Նրա կարծիքով՝ պետք է գնալ վարկային բեռի թեթեւացման: «Դա շատ հեշտ է մտածել, թե ինչպես պետք է անել եւ ինչի հաշվին պետք է անել»:

ԱՎԱՐՏԵԼ Է ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

«Արարատ» բանկը սույն թվականի մարտի 26-ին մեկնարկել էր պարտատոմսերի հերթական տեղաբաշխման գործընթացը: Համաձայն պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանների՝ տեղաբաշխման ավարտ էր սահմանվել սույն թվականի հունիսի 26-ը, սակայն տեղաբաշխումն ավարտվել է մայիսի 17-ին:

Հիշեցնենք, որ թողարկվել էր 5 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով, 25 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 5.75% արժեկտրոնային տարեկան եկամտաբերությամբ, 48 ամիս շրջանառության ժամկետով 200 հազար հատ պարտատոմս:

Տեղաբաշխման ավարտից հետո պարտատոմսերը ներկայացվելու են ցուցակման AMX Հայաստանի ֆոնդային բորսայում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱԶՆԱՎՈՒՐԸ ԿԴԱՌՆԱՐ 100 ՏԱՐԵԿԱՆ

ՆԱ ՀԱՅՐԵՆԻՔ ԷՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԵՋ

Շառլ Ազնավուր. ազգությամբ հայ ֆրանսիացի շանսոնիե, որ փոխեց ֆրանսիական երգարվեստն ու մեծ հետք թողեց համաշխարհային երաժշտության պատմությունում: Նրա երգերը թարգմանվեցին եւ երգվեցին աշխարհի տարբեր երկրներում, տարբեր լեզուներով:



Երգահան, բանաստեղծ, գրող, կինոդերասան եւ հասարակական գործիչ Վաղինակ Միքայելի Ազնավուրյանը ծնվել է 100 տարի առաջ՝ մայիսի 22-ին: Իր ստեղծագործական կյանքի ընթացքում շանսոնիեն տարբեր լեզուներով ձայնագրել է մոտ 1200 երգ, հեղինակել կամ համահեղինակ է եղել ավելի քան 1000 երգի:

Ծնունդով Ախլցխայից էրզրումցի հայրը եւ պոլսահայ մայրը ծանոթացել են Կոստանդնուպոլում, ամուսնանալուց հետո տեղափոխվել Հունաստան, ապա Ֆրանսիա: Փարիզում մեծացած Շառլի կյանքում շրջադարձային է լինում երգչուհի Էդիթ Պիաֆի հետ հանդիպումը:

Նախքան Պիաֆի հետ հանդիպումը՝ 1941 թվականին Ազնավուրը հանդիպում է կոմպոզիտոր, դաշնակահար Պիեռ Ռոշին, ով «Մյուզիք-Հոլ» դպրոցի տնօրենն էր եւ սկսվում է նրանց ընկերությունը, ինչից հետո Շառլը վերջնականապես որոշում է ընտրել երգարվեստը: Պիեռի հետ նրանք ստեղծում են «Ռոշ եւ Ազնավուր» դուետը (1943-1950) եւ սկսում են ելույթներ ունենալ տարբեր համերգասրահներում: 1944 թվականին նա գրում է իր առաջին «Ես խմել եմ» երգը, որը Ժորժ Ուլմերի կատարմամբ արժանացել է «Տարվա ձայնապնակ» մրցանակին:

Ռոշ եւ Ազնավուր դուետը փորձում է հաջողության հասնել Քվեբեկում, այնուհետեւ Մոնրեալում: Չնայած նրան, որ Շառլն ու Պիեռը մեծ ճանաչում ունեին Կանադայում, Ազնավուրը մեկնում է Ֆրանսիա եւ Պիաֆի խորհրդով սկսում իր սոլո կարիերան, որը սկզբնական շրջանում հաջողությամբ չի պսակվում: Նա սկսում է համագործակցել Ժիլբեր Բեկոյի հետ: 1956 թվականին համերգներով հանդես է գալիս Հյուսիսային Աֆրիկայի երկրներում, ինչը նրան մեծ ճանաչում եւ հաջողություն է բերում:

1955 թվականին նա առաջին անգամ ելույթ է ունենում Փարիզի Օլիմպիա դահլիճում՝ ինչին անդրադառնալով՝ ֆրանսիական մամուլը գրում է.«Ֆրանսիան ազնավուրացված է»:

Ստեղծագործական կյանքից բացի Ազնավուրը հսկայական հասարակական գործունեություն է ծավալել:

1988 թվականի սպիտակյան ավերիչ երկրաշարժից անմիջապես հետո հիմնադրել է «Ազնավուրը Հայաստանին» բարեգործական հիմնադրամը, իսկ 2017 թվականին որդու՝ Նիկոլայի հետ ստեղծել է «Ազնավուր» հիմնադրամը, որի նպատակն է շարունակել կրթական, սոցիալական եւ մշակութային ծրագրերի նախագծումն ու իրականացումը:

2008 թվականին ստացել է ՀՀ քաղաքացիություն եւ մեկ տարի անց դարձել Շվեյցարիայում ՀՀ դեսպանն ու Հայաստանի ներկայացուցիչը Ժնեւի ՄԱԿ-ի գրասենյակում, ինչպես նաեւ մի շարք այլ կազմակերպություններում:

Առ այսօր վաճառվել է Ազնավուրի շուրջ հարյուր միլիոն ձայնապնակ: Ամերիկյան «Թայմ» հանդեսի հարցման համաձայն՝ Ազնավուրը ճանաչվել է «Դարի արվեստագետ»՝ 149 հազար ձայնով: Արժանացել է Հայաստանի եւ Ֆրանսիայի բարձրագույն պետական պարգեւներին, այդ թվում՝ «Պատվո սեզարի» (1997):

Ազնավուրը նկարահանվել է նաեւ կինոյում՝ «Գլուխը պատին» (1958), «Կրակե՛ք դաշնակահարի վրա» (1960), «Սատանան եւ տասը պատվիրանները» (1962), «Արարատ» (2002) եւ այլն: Հեղինակել է 14 գրքեր, որոնք թարգմանվել են տասնյակ լեզուներով ու դարձել բեսթսելլերներ:

Աշխարհահռչակ շանսոնիեն մահացել է 2018 թվականի հոկտեմբերի 1-ին. հիշատակի ազգային տուրքի մատուցման արարողության ժամանակ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնն ասել է. «Շառլ Ազնավուրը մեզ ապրեցրել է իր երգերով: Հայկական ծագում ունեցող ներգաղթյալի որդին պետություն էր պետության մեջ, հայրենիք՝ հայրենիքի մեջ»:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՐՑՈՒՅԹ

Հունիսի 6-ին՝ հայ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան օրը, կմեկնարկի Խաչատրյանի անվան 20-րդ միջազգային մրցույթը: Այն նպատակ ունի բացահայտելու տաղանդավոր երիտասարդների եւ հանրահռչակելու Արամ Խաչատրյանի արվեստը:

Այս տարի մրցույթը կանցկացվի ջութակ մասնագիտական կարգում: Երաժշտական ստուգատեսը տեղի կունենա 3 փուլով: Առաջին փուլը կանցկացվի հունիսի 7-ին եւ 8-ին, երկրորդ փուլը՝ հունիսի 9-ին եւ 10-ին, երրորդ փուլը՝ հունիսի 11-ին եւ 12-ին: Իսկ ահա հունիսի 13-ին կայանալիք գալա համերգի ընթացքում հայտնի կդառնան մրցույթի հաղթողները, եւ տեղի կունենա պարգեւատրման արարողությունը:

Մրցույթի ծրագրում ընդգրկված են նաեւ Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները: Այդպիսով՝ մրցույթի մասնակիցները սովորում եւ իրենց նվագացանկում ընդգրկում են հայ մեծ կոմպոզիտորի ստեղծագործությունները:

Առաջին մրցանակակիրը կստանա 10000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով դրամական պարգեւ, 2-րդ տեղը զբաղեցնողը կպարգեւատրվի 5000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով, իսկ 3-րդ մրցանակակիրը կարժանանա 3000 դոլար մրցանակի: Նախատեսված են նաեւ հատուկ մրցանակներ:

«Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամի կողմից կազմակերպվող երաժշտական այս ստուգատեսն իր կարեւոր տեղն ունի աշխարհում անցկացվող միջազգային մրցույթների ընտանիքում:

Խաչատրյանի անվան միջազգային մրցույթը 2013 թվականից Ժնեւում հիմնված Միջազգային երաժշտական մրցույթների համաշխարհային ֆեդերացիայի (WFIMC) անդամ է եւ գործում է ֆեդերացիայի սահմանած կանոններով:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԳՎԱՐԴԻՈԼԱՆ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻՉ

Անգլիայի Պրեմիեր լիգայի ավարտված մրցաշրջանի լավագույն մարզիչը «Մանչեսթեր Սիթի»-ի գլխավոր մարզիչ Պեպ Գվարդիոլան է:

Գվարդիոլայի «Մանչեսթեր Սիթի»-ն 2023/24 մրցաշրջանում դարձավ Անգլիայի չեմպիոն՝ այդ տիտղոսը նվաճելով 4-րդ տարին անընդմեջ, ինչը բացառիկ ցուցանիշ է Անգլիայի առաջնության համար: Նման նվաճման դեռեւս ոչ մի ակումբ չի հասել:

Պրեմիեր լիգայի 38 տուրերից հետո «քաղաքայինները» հավաքեցին 91 միավոր եւ 2 միավորով առաջ անցան երկրորդ տեղում հայտնված «Արսենալ»-ից:

Գվարդիոլան «Մանչեսթեր Սիթի»-ի գլխավոր մարզչի պաշտոնը ստանձնել է 2016 թվականին:

ՍՊԵՐՑՅԱՆԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ռուսաստանի հավաքականի նախկին կիսապաշտպան Ալեքսանդր Մոստովոյը խոսել է Էդուարդ Սպերցյանի՝ Դորտմունդի «Բորուսիա» հավանական տեղափոխության մասին. «Այդ տեղափոխությունը հիանալի կլինի Սպերցյանի համար, սակայն Ռոյսին փոխարինելն այլ բան է: Դժվար թե հիմա նա փոխարինի Ռոյսին: Ես չէի ասի, թե Էդուարդը փորձառու չէ, բայց դեռ շատ բան ունի սովորելու:

Բոլոր նրանք, ովքեր Ռուսաստանից հեռացել են, խնդիրներ են ունեցել եվրոպական ֆուտբոլում: Արսեն Զախարյանին «Ռեալ Սոսիեդադում» չի հերիքում ագրեսիվությունը, Ալեքսանդր Գոլովինը նույնպես սկզբնական շրջանում խնդիրներ ուներ «Մոնակոյում»:

Շատ լավ է, որ «Բորուսիայի» նման ակումբը հետաքրքրված է Սպերցյանի ծառայություններով: Նա այնտեղ կարող է մեծ առաջընթաց գրանցել»:

Հիշեցնենք՝ ավելի վաղ Transfermarkt պորտալը հայտնել էր, որ Դորտմունդի «Բորուսիան» հետաքրքրված է Հայաստանի հավաքականի կիսապաշտպանի ծառայություններով: «Բորուսիայում» նրան դիտարկում են՝ որպես ակումբից հեռացող Մարկո Ռոյսի փոխարինողի:

ՌՈՆԱԼԴՈՒԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ՝ ՏՈՆԻԻՆ

Մադրիդի «Ռեալի» նախկին հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն, որն այժմ հանդես է գալիս Սաուդյան «Ալ-Նասրում», արձագանքել է «Լոս Բլանկոսի» կիսապաշտպան Տոնի Կրոսի՝ Եվրո-2024-ից հետո կարիերան ավարտելու մասին լուրերին:

«Շնորհակալ եմ ամեն ինչի համար, Տոնի: Ինչ պատիվ է քեզ հետ կիսել նույն ոլորտը: Ամենայն բարիք քեզ ապագայում»,- գրել է Ռոնալդուն սոցցանցում:

Հիշեցնենք, որ Ռոնալդուն եւ Կրոսը միասին հանդես են եկել Մադրիդի «Ռեալում» 2014-ից 2018 թվականներին:

● *Մայիսի 25-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Լորենցաչչո» իրոնիկ տրագեդիան: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ վայրի կենդանիների՝ 3-րդ երկիր արտահանման դեպքում թույլտվություն կամ լիցենզիա պահանջվում է, թե ոչ:

Իսկուհի Հայթայան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի «ՀՀ մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եւ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եւ ներմուծման լիցենզիայի եւ հայտի ձեւերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եւ ներմուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եւ ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N327-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N90-Ն որոշման համաձայն՝ վայրի կենդանիները, որոնց տեղափոխումը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով սահմանափակ է արտահանման դեպքում, ներառված են Հայաստանի Հանրապետության կողմից երրորդ երկրների հետ առեւտրի դեպքում սահմանափակումների ենթակա ապրանքախմբերի ցանկի մեջ:

Այս ապրանքների արտահանման համար լիցենզավորման գործընթացը համակարգող լիազոր պետական համակարգող մարմինը ՀՀ բնապահպանության նախարարությունն է:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Լիցենզիան լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն է, ինչպես նաեւ այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ, որը լիցենզավորող մարմնի կողմից տրվում է իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ արդյոք պետք է անշարժ գույքի պետական գրանցման կամ տեղեկատվություն ստանալու համար դիմումները ներկայացվեն այն սպասարկման գրասենյակ կամ օպերատորի մասնաճյուղ, որի սպասարկման տարածքում գտնվում է դիմումի առարկա անշարժ գույքը:

Ստեփան Տիգրանյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվության տրամադրման դիմումները կարող են ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի ցանկացած սպասարկման գրասենյակ կամ օպերատորի մասնաճյուղ՝ անկախ անշարժ գույքի գտնվելու վայրից: Նույնը վերաբերում է նաեւ ներկայացված դիմումի հիման վրա կազմված փաստաթղթերի ստացմանը, որոնք կրկին կարելի է ստանալ ինչպես դիմումը ընդունած, այնպես էլ ցանկացած այլ սպասարկման գրասենյակից կամ օպերատորի մասնաճյուղից:

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվություն ստանալու համար դիմողներին տրամադրվող ստացականում նշվում է դիմումի մուտքագրման համարը, որը միաժամանակ հանդիսանում է նաեւ ծածկագիր, որի օգնությամբ դիմողը հնարավորություն կունենա ՀՀ կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական կայքէջի միջոցով հետեւել իր դիմումի քննարկման ընթացքին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Հայաստանի հրաձգության հավաքականի անդամները կմասնակցեն աշխարհի գավաթի խաղարկությանը:

Գերմանիայի Մյունխեն քաղաքում մայիսի 31-ից հունիսի 8-ը կկայանա աշխարհի գավաթի խաղարկության հերթական փուլը:

Հայաստանի հրաձգության հավաքական թիմից մրցմանը կմասնակցեն Բենիկ Խլղաթյանը եւ Էլմիրա Կարապետյանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+2 + 6 +14 + 18
Կոտայքի լեռներ	+2 + 6 +13 + 16
Կոտայքի նախալեռներ	+8 + 11 +19 + 21
Գեղարքունիք	+2 + 5 +13 + 17
Լոռի	+3 + 5 +13 + 16
Տավուշ	+7 + 10 +17 + 19
Արագածոտնի լեռներ	+2 + 4 +12 + 14
Արագածոտնի նախալեռներ	+7 + 11 +19 + 23

Արարատ	+9 + 12 +22 + 24
Արմավիր	+8 + 11 +22 + 24
Վայոց ձորի լեռներ	+2 + 5 +13 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+9 + 11 +22 + 24
Սյունիքի հովիտներ	+8 + 12 +18 + 21
Սյունիքի նախալեռներ	+4 + 8 +14 + 17
ԼՂՀ	+5 + 9 +14 + 16
Երեւան	+16 + 18 +21 + 23

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.5.2024**
Հասցեն՝ Գերաքրքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*